ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 200-Ա

« 12 » ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022Թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ԹԻՎ 73-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին, 5-րդ և 6-րդ մասերով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման գործառույթներն ըստ բնագավառների բաշխելու և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2008 թվականի ապրիլի 15-ի թիվ 27 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» մարզպետի 2021 թվականի հունիսի 9-ի թիվ 73-Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1. Մարզպետարանի առանձին բնագավառների գործառույթներն ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգումը բաշխել մարզպետի, մարզպետի տեղակալի և մարզպետարանի գլխավոր քարտուղարի միջև՝ համաձայն թիվ 1 հավելվածի:»:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

10/12/2022

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2022թ. հոկտեմբերի 12-ի թիվ 200-Ա
որոշման

Մարզպետի, մարզպետի տեղակալի և մարզպետարանի գլխավոր քարտուղարի միջև մարզպետարանի առանձին բնագավառների գործառույթներն ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաշխում

1. **Մարզպետ Ա. Գրիգորյան**
   1) Քաղաքաշինություն,
   2) գյուղատնտեսություն և բնապահպանություն,
   3) տեղական ինքնակառավարում և հանրապետական գործադիր մարմինների հարցեր,
   4) հողաշինություն և հողօգտագործում:

2. **Մարզպետի տեղակալ Դ. Սարգսյան**
   1) Կրթություն, մշակույթ և սպորտ,
   1) առողջապահություն և սոցիալական ապահովություն,
   2) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն,
   3) զորահավաքային նախապատրաստություն,
   4) զարգացման ծրագրեր, զբոսաշրջություն և վերլուծություն,
   5) տեղեկատվություն և հասարակայնության հետ կապեր:

3. **Մարզպետարանի գլխավոր քարտուղար**
   1) Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացում,
   2) քարտուղարություն,
   3) իրավաբանություն,
   1) անձնակազմի կառավարում: